ԷՋԵՐ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵՆԷՆ

Ա.

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ

(12–ՐԴ ԴԱՐ)

12–ՐԴ դարի երկրորդ շրջանի հայ երաժշտական մշակոյթի ամենապայծառ դէմքերից մէկն է վաստակաւոր արուեստագէտ Յովհաննէս վանականը, որ իր գեղարուեստական գործունէութեամբ հայ եկեղեցական երաժշտութեան պատմութեան մէջ պատուաւոր տեղ է գրաւում:

Նա պատկանում է միջնադարեան այն արուեստագէտների շարքին, որը ոչ միայն մշակել, զարգացրել եւ խորացրել է իր հոգում թագնուած երաժշտական գեղեցիկ ձիրքը, այլեւ ամբողջապէս համակուել է հայ հոգեւոր երգերի հոգեպարար թովչանքով եւ իր վանականի պարտականութիւններին զուգընթաց՝ երկար տարիների անխոնջ աշխատանքով, արտակարգ ոգեւորութեամբ եւ առանձին սիրով ուսումնասիրել է հայ եկեղեցական բազմադարեան երաժշտութեան թանկագին աւանդներն ու նրանց գեղեցկութիւնները, որոնք մի նոր աշխարհ են բաց արել նրա արուեստի առջեւ:

Ուշագրաւ է եւ այն, որ այդ ուղղութեան նա մինչեւ իր կեանքի վերջը հաւատարիմ է մնացել եւ իր ինքնատիպ արուեստով դարձել է իր ապրած դարաշրջանի հայ եկեղեցական երաժշտութեան պայծառ դէմքերից մէկը:

Իր երաժշտական փայլուն ընդունակութիւններն էլ նրան դարձրել են 12–րդ դարի հայ հոգեւոր երաժշտութեան «անյաղթն երաժշտականը», հայկական եկեղեցական երաժշտութեան հպարտութիւնը: Առհասարակ, արուեստագէտի մեծութիւնը նախ եւ առաջ նրա երաժշտական հմտութիւնն է, ստեղծագործական վարպետութիւնը: Նա ձայնագրել եւ հայ երաժշտութեան ու ապագայ սերունդներին աւանդ է թողել հոգեւոր երգեր ու մեղեդիներ, որոնցով զարկ է տուել դարաշրջանի եկեղեցական երաժշտութեան զարգացմանը:

Ընդգծենք եւ այն, որ երաժշտագէտը, բացի երաժշտական տաղանդից, ունեցել է նաեւ գեղագրական արուեստի ձիրք: Իր վանական կեանքի շրջանում նա նուիրուել է նաեւ գրչական մշակոյթի վեհ գործին:

Հայ արուեստի մեծատաղանդ այս մարդուի յայտնութեան համար պարտական ենք Ներսէս Շնորհալու «Կաթողիկեայց թղթերի մեկնութեան» խորագրով ձեռագիր մատեանի յիշատակարանին: Դա միջնադարեան հայ երաժշտութեան պատմութեան կարեւոր մի մութ էջը լուսաբանող թանկագին մի աղբիւր է, ուր երաժշտագէտի մասին կարդում ենք այսպիսի ուշագրաւ տողեր. «... Եւ զիս զտառապեալս Յակովբ՝ զսակաւ աշխատողս եւ զամենաբարի զհարազատն իմ զՅովհաննէս, զընտիրն ի բեմականս եւ զանյաղթն յերաժշտականս եւ զանձանձրոյթն ի գրչութեան անհոնջ, զգովելին յամենայն բարեձեւութիւն... Եւ գրեցաւ ի ՈՒԷ (647 + 551 = 1198) թուիս լուսերանգ եւ հրաշապատում տառս առաքելագիծ մատենիս, բազմազան բարութեամբ եւ իմաստութեամբ լցեալ»:

Հայ երաժշտութեան պատմութեան համար առանձին նշանակութիւն ունեցող արժէքաւոր այս վաւերագրի ամբողջական պատկերը գտնւում է Վենետիկի – Ս. Ղազարի Մխիթարեան Միաբանութեան Մատենադարանում: Այդ թանկագին աղբիւրից որոշ հատուածներ տեսնում ենք նաեւ Հ. Ղեւոնդ Ալիշանի «Սիսուան»–ում, «Հայապատում»–ի մէջ, Զարբհանէլեանի «Հայկական հին դպրութեան պատմութիւն երկում, Հ. Միքայէլ Չամչեանի «Պատմութիւն հայոց» գրքում եւ Գարեգին Ա. կաթողիկոսի «Ցիշատակարանք ձեռագրաց» հատորում:

Փաստական այդ ցայտուն աղբիւրներն էլ վկայում են, որ երաժշտագէտ Յովհաննէսն իր դարաշրջանում յարգուել է իր «ամենաբարի», ազնիւ բնաւորութեամբ: Այդ էական առաքինութեան վրայ աւելացնենք նաեւ նրա «բեմական ընտիր» ձիրքը, «գովելի յամենայն բարեձեւութիւնը», յատկանիշեր, որոնց շնորհիւ նա սիրուել է ու յարգուել վանքի միաբաններից, սիրուել է ժամանակի արուեստագէտներից, մտաւորականներից եւ հասարակութիւնից:

Սակայն, նա 12–րդ դարում, առանձնապէս հռչակուել է, ինչպէս ընդգծեցինք, իր երաժշտական վարպետութեամբ, հոգեւոր երաժշտութեան արուեստի գծով կատարած նուաճումներով, որոնցով նա իր ապրած դարաշրջանի հայ ժողովրդի հոգում վառ է պահել եկեղեցական երաժշտական արուեստի սէրը:

Մի հանգամանք այժմ պարզ է, որ արուեստագէտ Յովհաննէսի կեանքի պատմութիւնը եւ հոգեւոր երաժշտութեան զարգացման գծով նրա կատարած դերը 12–րդ դարի երկրորդ շրջանի գեղարուեստական շարժման ուշագրաւ եւ արժէքաւոր էջերից մէկն է, վաստակաւոր մի մբշակ, որի պայծառ յիշատակը հայ երաժշտասէրների սրտերում այսօր վառ է պահում Ս. Ղազարի մենաստանի Մատենադարանում հանդիպող 1198 թուին գրուած թանկագին ձեռագրի յիշատակարանը:

Պարզ է եւ այն, որ «անյաղթն երաժշտականը» միջնադարեան հայ երաժշտական մշակոյթի ականաւոր մշակների շարքում ունի իր առանձնայատուկ եւ ուրոյն էջը:

Բ.

ԵՐԱԺԻՇՏ ՅՈՎԱՍԱՓ

(13–ՐԴ ԴԱՐ)

Երաժիշտ Յովասափի գեղարուեստական գործունէութեան պատմութիւնը 724 երկար տարիների հնութիւն ունի: Նա ապրել է եւ գործել 13–րդ դարի առաջին կիսում «հռչակաւոր» քաղաք Կարին քաղաքում եւ ամբողջ էութեամբ նուիրուել է հայ երաժշտութեան արուեստի զարգացմանը: Այդ տեսակէտից էլ նա արժանի է ուսումնասիրութեան:

Վաստակաւոր երաժշտի մասին կարդում ենք 1230 թուականին գրուած նկարագրդ մի «Աւետարան»–ի յիշատակարանում: Դա «չուշանափայլ, նուրբ եւ ազնիւ» մագաղաթի վրայ, «Մեսրոպեան բարձրագիր, յստակ եւ ընտիր երկաթագրով», Գրիգոր գրչի կողմից Թէոդոսպաւլիսում (Կարինում) գրուած արժէքաւոր ձեռագիրն է, որի յիշատակարանի էջերը ձեզ տանում են 13–րդ դարի առաջին շրջանը:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Գոնիայի սուլտանը, 1204 թուին, արշաւում է Թէոդուպաւլիսի վրայ: Վրացական բանակները, Զաքարէ սպասալարի առաջ-

© National Library of Armenia

նորդութեամբ, շուտով օգնութեան են հասնում եւ ուժեղ դիմադրութիւն ցոյց տալիս, բայց վերջում պարտուում են եւ յետ նահանջում։ Այդ հանգամանքը հաստատում են ժամանակի վաստակաւոր գրիչ՝ Վարդան քահանայի 1204 թուին, Մշում գրած «Տաւնական» ձեռագրի յիշատակարանի հետեւեալ տողերը. «... Եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ... փքացեալ լեռնացեալ եհաս ի Թէոդուպաւլիս եւ անդի կամեցեալ անցանել յաշխարհն հայոց եւ վրաց... Իսկ աւգնականութեամբն Աստուծոյ եկին հասին զաւրքն վրաց եւ մեծն Զաքարիէ հանդերձ Իւանէի(ւ) հարազատաւն իւր եւ այլ աստուածասէր իշխանաւք եւ նախարարաւք եւ յոգնախումբ խառնիճաղանճ բազմութեամբ հասին ի վերայ անաւրէն զաւրացն Տաճկաց եւ յանխնա կոտորեցին զնոսա, զոմանս ձերբակալ արարին, եւ ոմանք ի փախուստ դարձան, բայց սուլտանն անվրէպ մնաց...»։

Զնայած 13–րդ դարի քաղաքական ծանր եւ անմխիթար պայմաններին, հայ մշակութային կեանքը Հայաստանում ոչ միայն կանգ չի առնում, այլեւ առանձին փայլ ու երանգ է ստանում։

Ահա ժամանակի մատենագրական գործունէութեան եւ գեղարուեստական շարժման նշանաւոր մի կենտրոն է հանդիսանում վաստակաւոր երաժիշտ Յովասափի ծննդավայրը՝ «հոյակապ եւ հռչակաւոր քաղաքս Թէոդոսաւլիս (Կարին)», ուր զարգանում եւ ուշագրաւ նուաճումներ են անում գրչական եւ մանրանկարչական արուեստները։ Այն պատմական քաղաքումն էլ ձեւակերպւում եւ իրենց ինքնուրոյն արուեստով փայլում են մի շարք տաղանդաւոր գրիչներ եւ վարպետ մանրանկարիչներ, որոնց շարքում պատուաւոր տեղ է գրաւում բնիկ Կարնեցի Վարդան քահանան, որ 1204 թուին, Մշոյ «Առաքելոց» վանքում, մագաղաթի վրայ, երկաթագրով գրել է «Տաւնական» մեծադիր եւ հոյակապ ձեռագիրը։ Դա հայ գրչական եւ մանրանկարչական արուեստների առաջնակարգ մի ստեղծագործութիւն է, որ այժմ գտնւում է Երեւանի Պետ. Մատենադարանում(*)։

Կարնի գրչական եւ մանրանկարչական դպրոցի պարծանքն է կազմում նաեւ արուեստագէտ Գրիգոր գրիչն ու ծաղկողը, որ 1230 թուին հայ մատենագրութեան նուիրել է մի նոր ձեռագիր «Աւետարան», որի յիշատակարանը, իր բովանդակութեամբ, կրկնակի արժէք է ներկայացնում այն տեսակէտից, նախ՝ ցայտուն դաղափար է տալիս 13–րդ դարի առաջին շրջանում Թէոդոսաւլիսում (Կարինում) առաջ եկած մշակութային շարժման մասին։ Այնտեղ, պատմական քաղաքի, արուեստագէտ միաբանները, մի գեղեցիկ ներդաշնակութեամբ, ընդօրինակում են եւ վրձինում մէկը միւսից ուշագրաւ ձեռագրեր եւ զարկ տալիս դարաշրջանի գրչական ու նկարչական արուեստների զարգացմանը։ Այդ շարժման մի գեղեցիկ պատկերը տեսնում ենք 1230 թուականին Գրիգոր գրչի ձեռքով գրուած Աւետարանում, որի յիշատակարանում կարդում ենք.

«... Եւ ես ըստ կարի իմում բազում աշխատութեամբ գծագրեցի իմով ձեռամբ եւ ծաղկազարդեալ յաւրինեցի ոսկւով պատուականաւ, հրով փորձեալ եւ զտեալ եւ երփներին երանգաւք եւ պայծառ դեղովք գրոշմեալ ներգործեցի ի սմա ազգի ազգի քանդակս խորանաձեւս եւ երկնամանս եւ այլ մանրամասն ինչ ծաղկաւք ըստ տուեցելոց ինձ ի չնորհաց հոգւոյն սրբոյ... Եւ հայկազնեան տումարիս վեցից հարիւրից եւթանասուն եւ ինն ամաց՝ (679 + 551 = 1230) ի հոյակապ եւ ի հռչակաւոր քաղաքիս Թէոդոսաւլիս»։

Ձեռագրի յիշատակարանը հայ երաժշտական արուեստի պատմութեան տեսակէտով էլ ուրոյն արժէք ունի։ 13–րդ դարում Կարինում նոր երանգ է ստանում նաեւ երաժշտական մշակոյթը, որի տաղանդաւոր արտայայտիչը հանդիսանում է երաժիշտ Յովասափը։

Վաստակաւոր այս արուեստագէտի մասին 1230 թուի ձեռագրի յիշատակարանում ընդգծուած են այսպիսի սեղմ, բայց բնորոշ տողեր. «... Յիշեսջիք զԳրիգոր գրիչ ... եւ զՅովասափ փիլիսոփայ (= երաժիշտ) զհոգ(է)ւոր եղբայր մեր...»։

Նոյն երեւոյթն ընդգծել է նաեւ Գարեգին Ա. կաթողիկոսը իր «Յիշատակարանք ձեռագրաց» արժէքաւոր գրքի 1190–րդ էջում, ուր կարդում ենք. «փիլիսոփայ (= երաժիշտ), «հոգ(է)ւոր եղբայր»՝ Գրիգոր գրչի, 1230 թ, Թէոդոսոլիս կամ Կարին քաղաքում»։

Թէ ինչպիսի՞ գործունէութիւն է ունեցել երաժիշտ Յովասափը եւ ի՞նչ գեղեցիկ մեղեդիներով ու տաղերով է զարդարել հայ եկեղեցական երաժշտութեան դանձարանը, դժբախտաբար, չկան փաստական աղբիւրներ։ Այսքանը միայն պարզ է, որ երաժշտագէտի կեանքի որոշ երեւոյթներն իր էջերում լուսաբանող 1230 թուականին գրուած ձեռագիր «Աւետարան»–ը այժմ առանձին դուրգուրանքով պահւում է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանում։

* * *

Միջնադարի հայ երաժշտական արուեստի պատմութեան էջերն արձանագրելիս նշենք նաեւ Մշոյ պատմական «Առաքելոց» վանքում փայլող երաժիշտների անունները եւս, որոնք ժամանակի՝ 13–րդ դարի, հայ արուեստագէտների շարքում ունին իրենց համեստ էջը։ Դրանցից յայտնի են՝ Յուսիկ, Ռստագէս, Ատեփս, Ստեփանոս եւ Ներսէս երաժիշտները, որոնց անունները գրոշմած են 1204 թուին, Կարնեցի Վարդան քահանայ գրչի ձեռքով, «Առաքելոց» վանքում, գրուած «Տաւնական» ձեռագրի յիշատակարանում։

Այս վաստակաւոր երաժիշտների հայ եկեղեցական արուեստի զարգացման գծով կատարած գործերի մասին եւս, դժբախտաբար, փաստացի տեղեկութիւններ չկան։ Նրանց կեանքից յայտնի է միայն այն, որ նրանք եղել են «Առաքելոց» վանքի միաբաններ, ապրել եւ գործել այդ պատմական մենաստանում եւ 1204 թուականին գրուած «Տաւնական» մատեանի գնման նուիրատուներ են հանդիսացել. երեւոյթներ, որոնք ընդգծում են նրանց գրասէր, լուսաւոր եւ առաջադէմ գեղեցիկ յատկանիշների մասին։

Թէհրան ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(*) Այս արժէքաւոր ձեռագիրը մանրամասն ուսումնասիրեցի 1926–27 թուին, երբ որպէս գիտական աշխատաւոր պաշտօնավարում էի Երեւանի Պետական Թանգարանի պատմա–գրական բաժնում, ուր գտնւում էր ձեռագիրը։ ԱՐ. ԵՐ.

Ծանօթ. — Պր. Արամ Երեմեանի «Տաղարան Յովհաննէս Թլկուրանցու» մասին գրած յօդուածին մէջ («Բազմավէպ» 1953, թ. 1–2, էջ 30), Վահան Աբեղան՝ սխալմամբ եղած է Վահան Ախրեղան։ ԽՄԲ.

© National Library of Armenia